Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

²⁷ Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է ----- (-----) ՀՀ դրամ, որից ----- (-----) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին (.....) ՀՀ դրամ՝ որից ----- (-----) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

n-րդ չափաբաժին (.....) ՀՀ դրամ՝ որից ----- (-----) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:²⁹

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

1-ին չափաբաժին

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,1(գրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

2-րդ չափաբաժին

²⁹ Եթե Կապալառուի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս սույն կետից հանվում են «որից -- ----- (-----) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն» բառերը:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,19 (զրո ամբողջ տասնինն հարյուրերորդական) տոկոսի չափով:

1-ին չափաբաժին

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով:³¹ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

2-րդ չափաբաժին

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 3 (երեք) տոկոսի չափով:³¹ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՎԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:³²

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

³¹ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

³¹ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

³² Պերական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:³³

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:³⁴

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ

³³ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով:

³⁴ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համարեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

Ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

/ստորագրություն/
Կ.Տ

/ստորագրություն/
Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ 2020թ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՄՈՒՏՔԵՐԻ
ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Դավթ. 1-ին թաղ. – 33շ. /3 և 4մ/, 32 շ. /4մ/, 15շ. /1 և 2, 3մ/, 14շ /2մ բազալտ. բազրիք/, 40շ., 10Աշ. /1 և 2մ/, 35շ /մետ.դուռ/, 28շ. /մետ. դուռ/

Դավթ. 2-րդ թաղ.- 39շ. /1 և 2 մ/, 6շ., 13շ. , 11, 12

Դավթ. 3-րդ թաղ.- 24շ, 1շ., 13շ. /3 և 4մ/, 8շ. /3մ/ /բազալտ, մետ.դուռ, բազրիք/

Դավթ. 4-րդ թաղ. -46/10 /1և 2մ/, 51շ., 1Աշ /1 և 2մ/, 11շ /3 և 4մ/, 15շ., 26շ. , 3շ 2մ, 44 շ 3մ

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Չափի միավոր	քանակ	Միավորի արժեք /հազար դրամ	Ընդհանուր արժեք /հազար դրամ/
1	2	3	4	5	6
1	Առաստաղի և պատերի մասնակի մաքրում առկա քսահարթումից և ներկից	քմ	12810.0		
2	Պատերի վրայից քայքայված գաջի սվաղի քանդում	քմ	710.0		
3	Առաստաղի վրայից քայքայված գաջի սվաղի քանդում	քմ	90.0		
4	Պատերի սվաղում գիպսոնիտե շաղախով անկյունային մասերում տեղադրելով հարդարման անկյունակներ	քմ	710.0		
5	Առաստաղի սվաղում գիպսոնիտե շաղախով	քմ	90.0		
6	Առաստաղի սվաղի ծեփամածկում և երկշերտ ներկում ջրաէմուլսիոն ներկով	քմ	9652.0		
7	Պատերի սվաղի ծեփամածիկում, անկյունային մասերում տեղադրելով հարդարման անկյունակներ և երկշերտ ներկում լատեքսային ներկով	քմ	12118.0		
8	Պատերի սվաղի ծեփամածիկում, անկյունային մասերում տեղադրելով հարդարման անկյունակներ և երկշերտ ներկում լավ որակ յուղաներկով /ներառյալ դռների և պատուհանների շրջանակների/	քմ	13360.0		
9	Աստիճանավանդակների բազրիքների վերանորոգում և երկշերտ յուղաներկում	քմ	1567.0		
10	Աստիճանավանդակների բազրիքների փայտե բռնակների պատրաստում, հղկում, տեղադրում և երկշերտ ներկում	մ	1522.8		

11	Կոտրված ապակիների փոխարինում նորով 2,2 մմ հաստությամբ, տեղադրում կատարել /շտափկով/	քմ	73.5		
12	Հատակի ցեմենտ ավազե հարթաշերտի իրականացում 3 սմ հաստությամբ	քմ	177.0		
13	h=10սմ պեմզաբլոկների միջնորմների շարում	քմ	29.0		
14	Շքամուտքի հատակի սալաստում բազալտե սալերով 30 մմ հաստությամբ: Հնարավորության դեպքում կառուցել թեքահարթակ	քմ	304.8		
15	Մետաղական դռների պատրաստում, երկու կողմից թիթեղով b=2մմ, b=1,5մմ, L45մմ կողավորված փականով, զսպանակով, ապակիով, բռնիչ և ներկում, և տեղադրում ներառյալ շեպերի հարդարումով /11հատ/	քմ	41.7		
16	Մետաղական բազերիքների պատրաստում, յուղաներկում և տեղադրում 20x40, 30x30, 15x15	գծմ	130.0		
17	Շին աղբի հավաքում, իջեցում, բարձում ձեռքով և տեղափոխում աղբավայր 12կմ	տ	26.5		
18	Փայտե դռների վերանորոգում տեղադրելով բռնիչ, զսպանակ, /նալիչնիկ/, /շտապիկ/, ներկում	կ-տ	102.0		
19	Բետոն հատակների քանդում	քմ	128.0		
20	Մետաղական հովհարի/նավես/ պատրաստում	տ	0.05		
21	Մետաղական անկյունակի արժեքը L50 մմ	մ	16.5		
22	Պռոֆնաստիլի արժեքը	քմ	6.5		
23	Պլաստմասե /կորոբների/տեղադրում էլ. Լարերի վրա a=40mm	մ	102.0		
24	Պատերի սվաղ ցեմենտ-ավազե շաղախով	քմ	37.5		
25	Աստիճանավանդակների մետաղական բազրիքների վերանորոգում /պակաս ձողերի մոնտաժում/ և երկշերտ յուղաներկում	քմ	4.0		

Ընդամենը՝
ԱԱՀ 20%

Ընդամենը՝ 68855.93

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ 2020Թ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ, ԲԱԶՄԱՀԱՐԿ ՇԵՆՔԵՐԻ ՄՈՒՏՔԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Դավթ. 1-ին թաղ. – 33շ. /3 և 4մ/, 32 շ. /4մ/, 15շ. /1 և 2, 3մ/, 14շ /2մ բազալտ. բազրիք/, 40շ., 10Աշ. /1 և 2մ/, 35շ /մետ.դուռ/, 28շ. /մետ. դուռ/

Դավթ. 2-րդ թաղ.- 39շ. /1 և 2 մ/, 6շ., 13շ. , 11, 12

Դավթ. 3-րդ թաղ.- 24շ, 1շ., 13շ. /3 և 4մ/, 8շ. /3մ/ /բազալտ, մետ.դուռ, բազրիք/

Դավթ. 4-րդ թաղ. -46/10 /1և 2մ/, 51շ., 1Աշ /1 և 2մ/, 11շ /3 և 4մ/, 15շ., 26շ. , 3շ 2մ, 44 շ 3մ

Կապալառուն պետք է իրականացնի Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքներ

1. Նախամուտքերի աստիճանների /բազալտե, բետոնե և այլ/ նորոգում, անհրաժեշտության դեպքում ջարդված կամ բացակայող աստիճանների փոխում նորով:
2. Նախամուտքերի մետաղական բազրիքների նորոգում և ներկում, անհրաժեշտության դեպքում նոր բազրիքների տեղադրում
3. Մուտքի շվաքարանների նորոգում և ներկում անհրաժեշտության դեպքում նորի իրականացում
4. Նախամուտքի հարթակի նորոգման անհրաժեշտություն
5. Մուտքի մետաղական դռան /բռնակներ և փականներ/ նորոգում և ներկում
6. Մուտքի նոր մետաղական դռան տեղադրում՝ կողավորված փականով
7. Շքամուտքի հարթակի նորոգման անհրաժեշտություն
8. Պատերի և առաստաղների վրայից քայքայված գաջի սվաղի քանդում
9. Պատերի և առաստաղների վրայից սոսնձաներկից մաքրում
10. Պատերի և առաստաղների մածկապատում և ներկում լատեքսային ներկով, կամ երկշեռ յուղաներկում
11. Աստիճանավանդակների և նախամուտքի գաջե սվաղի նորոգում
12. Աստիճանավանդակների բազրիքների մետաղական էլեմենտների, փայտե բռնատեղերի ամրացում, նորոգում և ներկում
13. Անհրաժեշտության դեպքում բացակայող հատվածներում նոր մետաղական բազրիքների և փայտե բռնակների տեղադրում
14. Աստիճանավանդակների և աստիճանների հարթակների քայքայված և ջարդված /բետոնե, մոզաիկե, կերամիկական սալերի/ նորոգում
15. Ջարդված կամ բացակա ապակիների փոխարինում նորով
16. Տանիքների դռների նորոգում կամ նորի տեղադրում
17. Աստիճանավանդակների և նախամուտքերում էլեկտրական մալուխագծերի կարգավորում
18. Շինարարական աղբի բարձում և տեղափոխում /մինչև 12կմ հեռ. վրա/
19. Աստիճանավանդակների փայտե պատուհանների նորոգում և ներկում
20. Բացակայող հատվածներում նոր փայտե պատուհանների տեղադրում
21. Մուտքերում մաքրության ապահովում շինաշիսատանքների կատարման ընթացքում և ավարտից հետո /դռների, հաշվիչ սարքերի, աստիճանների ծածկում պոլիէթիլենային թաղանթով կամ այլ նյութով/:
22. Աշխատանքի ընթացքում բնակարանների դռների, հաշվիչների, պատուհանների, հատակը ծածկել պոլիէթիլենով:
23. Աշխատանքների ավարտից հետո Կապալառու կազմակերպությունը կրում է **մեկ տարվա** երաշխիքային պարտավորություն:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

1. Աշխատանքները իրականացնել շինարարական նորմերին, կանոններին և տեխնիկական պայմաններին համապատասխան
2. Ապահովել շինարարության ժամանակ օգտագործվող շինարարական նյութերի որակը հաստատող փաստաթղթեր (սերտեֆիկատներ, տեխ. անձնագրեր, լաբորատոր ստուգման և

փորձարկման մասին հաշվետվություններ և այլն) համապատասխանելիությունը գործող ստանդարտներին, տեխնիկական և այլ նորմատիվային պահանջներին:

3. Նշված աշխատանքները պետք է իրականացվեն Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կոմունալ տնտեսության և բազմաբնակարան բնակելի շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժնի կողմից տրվող պատվեր-առաջանդրանքի հիման վրա:

Նախահաշիվ-Ծավալաթերթ

Շենգավիթ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգման ցանկը կցվում է /հավելված 1/

Смета расходов -объемный лист

Перечень ремонтов многоквартирных домов в Шенгавитском районе прилагается (Приложение 1).

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Արժեքը /հազ. դրամ/ Стоимость / Тысяча Драм /	
				Միավորի գինը	Ընդամենը
		Единица измерения	Объем	Общая стоимость 1 единица	Общая стоимость
1	2	3	4	5	6
1	Պատերի վրայից քայքայված սվաղի քանդում, հին յուղաներկի մաքրում	Ս ²	4000		
	Разборка разрушенной штукатурки на стенах, очистка от старой масляной краски	м2			
2	Պատերի և առաստաղի վրայից քայքայված սվաղի քանդում, հին ներկի մաքրում	Ս ²	6000		
	Разборка разрушенной штукатурки на стенах и потолке, чистка старой краски	м2			
3	Պատերի և առաստաղի սվաղ գաջե շաղախով	Ս ²	3550		
	Стенная и потолочная штукатурка с гипсовым раствором	м2			
4	Պատերի փոսալցում (սվաղում) զիպսոնիտով, հարթեցում ծեփամածիկով, հղկաթղթով ողողում և լավորակ երկշերտ յուղաներկում	Ս ²	7400		
	Штукатурка стен гипсонитм, разглаживание замазкой, шпаклевка, коррекция наждачной бумагой и качественная покраска двухслойной масляной краской	м2			
5	Պատերի փոսալցում (սվաղում) զիպսոնիտով, հարթեցում ծեփամածիկով, հղկաթղթով ողողում և ներկում լավորակ լատեքսային ներկով	Ս ²	8900		
	Штукатурка стен гипсонитм, разглаживание замазкой, шпаклевка, коррекция наждачной бумагой и качественная крашение латексной краской				

6	Առաստաղների փոսալցում (ավաղում) գիպսոնիտով, հարթեցում ծեփամածիկով, հղկաթղթով ողողում և ներկում լավորակ լատեքսային ներկով	Մ ²	4800		
	Штукатурка потолков гипсонитм, разглаживание замазкой, шпаклевка, коррекция наждачной бумагой и качественная крашение латексной краской	մ2			
7	Հատակի ցեմենտ ավազե շաղախով հարթաշերտի վերանորոգում H=3 սմ (այդ թվում նաև աստիճանների)	Մ ²	520		
	Ремонт пола стяжка цемента песочным раствором H = 3 см (включая лестницу)	մ2			
8	Բազրիքներին նոր փայտե բռնածողի տեղադրում	Մ	2000		
	Установка новой деревянной ручки на пелил	մ			
9	Պատուհանների նորոգում, երկշերտ լավորակ յուղաներկում	Մ ²	300		
	Ремонт окон, качественная покраска двухслойной масляной краской	մ2			
10	Անկյունակի տեղադրում	զմ	5100		
	Установка угольника	մ			
11	Բազրիքների, մետաղական տարրերի և փայտե բռնածողի վերանորոգում, ամրացում, մաքրում հին ներկից և երկշերտ լավորակ յուղաներկում	Մ ²	3700		
	Ремонт, армирование металлических элементов и деревянной ручки пелил, чистка старой краски, качественная покраска двухслойной масляной краской	մ2			
12	Շին աղբի հավաքում, ձեռքով բարձում բեռնատար ա/մ վրա և տեղափոխում 12 կմ, մաքրել մուտքը և բերել պատշաճ տեսքի	ի	18.3		
	Сбор мусора, ручная погрузка на грузовик и транспортировка 12 км, очистить подъезд и придать ей надлежащий вид	т			
	Ընդամենը` Итого				
	ԱԱՀ (20%)` НДС (20%)				
	Ընդամենը` Всего				33431.4

1	Մայիսի 9-ի փողոց հ. 3 շենք /1 հատ/	Улица 9 мая 3 здания / 1 шт /
2	Մայիսի 9-ի փողոց հ. 5 շենք /1 հատ/	Улица 9 мая 5 здания / 1 шт /
3	Մայիսի 9-ի փողոց հ. 8 շենք /1 հատ/	Улица 9 мая 8 здания /1шт /
4	Մայիսի 9-ի փողոց հ. 13 շենք /1 հատ/	Улица 9 мая 13 здания /1шт /
5	Մայիսի 9-ի փողոց հ. 12 շենք /2 հատ/	Улица 9 мая 12 здания /1шт /
6	Գ. Նժդեհի փողոց 15 շենք /1 հատ/	Г. Нжде ул. 15 здания /1шт /
7	Գ. Նժդեհի փողոց 21 շենք /1 հատ/	Г. Нжде ул. 21 здания /1шт /
8	Արշակունյաց պողոտա հ. 42 շենք /1 հատ/	Аршакуняц пр. 42 здания /1шт /
9	Արշակունյաց պողոտա հ. 48/3 շենք /2 հատ/	Аршакуняц пр. 48/3 здания /1шт /
10	Արշակունյաց պողոտա հ. 50 շենք /1 հատ/	Аршакуняц пр. 50 здания /1шт /
11	Արշակունյաց պողոտա հ. 52 շենք /1 հատ/	Аршакуняц пр. 52 здания /1шт /

12	Արշակունյաց պողոտա հ. 54/3 շենք /1 հատ/	Аршакуняц пр. 54/3 здания /1шт /
13	Արտաշիսյան փողոց հ. 44/4 շենք /1 հատ/	Арташисяна ул. 44/4 здания /1шт /
14	Բագրատունյաց փողոց 1-ին նրբանցք 15 շենք /1 հատ/	Багратуныц 1-й переулоч 15 здания /1шт /
15	Արտաշիսյան փողոց հ. 45/20 շենք /1 հատ/	Арташисяна ул. 45/20 здания /1шт /
16	Արտաշիսյան փողոց հ. 45/21 շենք /1 հատ/	Арташисяна ул. 45/21 здания /1шт /
17	Բագրատունյաց փողոց հ. 7 շենք /2 հատ/	Багратуныц ул. 7 здания /2шт /
18	Բագրատունյաց փողոց հ. 11 շենք /1 հատ/	Багратуныц ул. 11 здания /1шт /
19	Բագրատունյաց փողոց հ. 13 շենք /2 հատ/	Багратуныц ул. 13 здания /2шт /
20	Բագրատունյաց փողոց հ. 15 շենքի /1 հատ/	Багратуныц ул. 15 здания /1шт /
21	Եղբայրության փողոց հ. 8 շենք /2 հատ/	Ехпайрутян ул. 8 здания /2шт /
22	Եղբայրության փողոց հ. 12 շենք /1 հատ/	Ехпайрутян ул. 12 здания /1шт /
23	Եղբայրության փողոց հ. 14 շենք /2 հատ/	Ехпайрутян ул. 14 здания /2шт /
24	Գ. Նժդեհի փողոց հ.9 շենք /1 հատ/	Г. Нжде ул. 9 здания /1шт /
25	Գ. Նժդեհի փողոց 9ա շենք /1 հատ/	Г. Нжде ул. 9а здания /1шт /
26	Չեխովի փողոց հ. 15 շենքի /2 հատ/	Ул. Чехова 15 зданий / 2 шт /
27	Մանանդյան փողոց հ. 1 շենք /1 հատ/	Улица Манандяна ул. 1 здание / 1 шт /
28	Մանանդյան փողոց հ. 14 շենք /1 հատ/	Улица Манандяна ул. 14 здание / 1 шт /
29	Շիրակի փողոց հ. 66 շենք /1 հատ/	Улица Ширака 66 зданий / 1 шт. /
30	Շիրակի 4-ին նրբ . 7ա շենք /1 հատ/	Шираки 4-й переулоч 7а здания /1шт /
31	Շիրակի 4-ին նրբ . 8ա շենք /1 հատ/	Шираки 4-й переулоч 8а здания /1шт /
32	Եղ. Թադևոսյան փողոց հ. 22 շենք /1 հատ/	Ег Тадевосяна 22 здания /1шт /
33	Ս. Տարունցու նրբանցք հ. 14 շենք /2 հատ/	С. Таронци переулоч 14 зданий / 2 шт /
34	Աերացիա թաղամաս 3 շենք /1 հատ/	Аэрация 3 здания / 1 шт /
35	Աերացիա թաղամաս հ. 5 շենք /1 հատ/	Аэрация 5 здания / 1 шт /
36	Աերացիա թաղամաս հ. 3/1 շենք /1 հատ/	Аэрация 3/1 здания / 1 шт /
37	Արշակունյաց պողոտա հ. 135ե շենք /2 հատ/	Аршакуняц пр. 135е здания /2шт /
38	Շարուրի փողոց 12 շենք /2 հատ/	Ул. Шарура 12 здания / 2 шт /
39	Շարուրի փողոց 14 շենք /3 հատ/	Ул. Шарура 14 здания / 3 шт /
40	Շարուրի փողոց 23 շենք /1 հատ/	Ул. Шарура 23 здания / 2 шт /
41	Բագրատունյաց փողոց հ. 16 շենք /1 հատ/	Багратуныц ул. 16 здания /1шт /
42	Բագրատունյաց փողոց հ. 20 շենք /1 հատ/	Багратуныц ул. 20 здания /1шт /
43	Բագրատունյաց փողոց հ. 24 շենք /1 հատ/	Багратуныц ул. 24 здания /1шт /
44	Արտաշիսյան փողոց հ. 54 շենք /1 հատ/	Арташисяна ул. 54 здания /1шт /
45	Արտաշիսյան փողոց հ. 56 շենք /1 հատ/	Арташисяна ул. 56 здания /1шт /
46	Արտաշիսյան փողոց հ. 58 շենք /1 հատ/	Арташисяна ул. 58 здания /1шт /
47	Մանանդյան փողոց հ. 23ա շենք /3 հատ/	улица Манадян 23а здания / 3 шт /
48	Եղբայրության փողոց հ. 5 շենք /1 հատ/	Ехпайрутян ул. 5 здания /1шт /
49	Եղբայրության փողոց հ. 9 շենք /1 հատ/	Ехпайрутян ул. 9 здания /1шт /
50	Շիրակի 1-ին նրբ . 3 շենք /1 հատ/	Шираки 1-й переулоч 3 здания /1шт /
51	Շիրակի 1-ին նրբ . 5 շենք /1 հատ/	Шираки 1-й переулоч 5 здания /1шт /
52	Շիրակի 1-ին նրբ . 9 շենք /1 հատ/	Шираки 1-й переулоч 9 здания /1шт /
53	Շիրակի 4-ին նրբ . 3 շենք /1 հատ/	Шираки 4-й переулоч 3 здания /1шт /
54	Շիրակի 4-ին նրբ . 9 շենք /2 հատ/	Шираки 4-й переулоч 9 здания /2шт /

Տեխնիկական բնութագիր

Պետք է իրականացվեն Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքների: Աշխատանքները պետք է մատուցվեն նախատեսված ծավալներին համապատասխան:

Պատերի վրայից քայքայված սվաղի քանդում, հին յուղաներկի մաքրում

Պատերի և առաստաղի վրայից քայքայված սվաղի քանդում, հին ներկի մաքրում

Պատերի և առաստաղի սվաղ գաջե շաղախով

Պատերի փոսայցում (սվաղում) գիպսոնիտով, հարթեցում ծեփամածիկով, հղկաթղթով ողողում և լավորակ երկշերտ յուղաներկում, /հատակն ու դռները փակել, ծածկել պոլիէթիլային թաղանթով կամ համարժեք/

Պատերի փոսայցում (սվաղում) գիպսոնիտով, հարթեցում ծեփամածիկով, հղկաթղթով ողողում և ներկում լավորակ լատեքսային ներկով, /հատակն ու դռները փակել, ծածկել պոլիէթիլային թաղանթով կամ համարժեք/

Առաստաղների փոսայցում (սվաղում) գիպսոնիտով, հարթեցում ծեփամածիկով, հղկաթղթով ողողում և ներկում լավորակ լատեքսային ներկով, /հատակն ու դռները փակել, ծածկել պոլիէթիլային թաղանթով կամ համարժեք/

Հատակի ցեմենտ ավազե շաղախով հարթաշերտի վերանորոգում H=3 սմ (այդ թվում նաև աստիճանների)

Աստիճանների և հարթակների նորոգում

Բազրիքներին նոր փայտե բռնածողի տեղադրում

Բազրիքների նորոգում, անհրաժեշտության դեպքում նորի տեղադրում

Պատուհանների նորոգում, երկշերտ լավորակ յուղաներկում

Անկյունակի տեղադրում

Բազրիքների, մետաղական տարրերի և փայտե բռնածողի վերանորոգում, ամրացում, մաքրում հին ներկից և երկշերտ լավորակ յուղաներկում

Շին աղբի հավաքում, ձեռքով բարձում բեռնատար ավ և տեղափոխում 12 կմ, մաքրել մուտքը և բերել պատշաճ տեսքի

Օգտագործվող բոլոր նյութերը և սարքավորումները պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող նորմատիվային պահանջներին, ինչպես նաև ապրանքների որակավորման և պարամետրային ցուցանիշներին:

Բոլոր տիպի աշխատանքները պետք է կատարվեն ապահովելով շին. նորմերը, կանոնները, ստանդարտներն ու տեխ. պայմանները:

Ապահովել շինարարության ժամանակ օգտագործվող շինարարական նյութերի որակը հաստատող փաստաթղթերի /սերտեֆիկատներ, տոխնիկական անձնագիր, լաբորատոր ստուգման և փորձարկման մասին հաշվետվություններ և այլն/ համապատասխանելիությունը գործող ստանդարտներին, տեխնիկական ու այլ նորմատիվային պահանջներին:

Անվտանգության պատասխանատվությունը կրում է կապալառու:

Աշխատանքների ավարտից հետո **Կապալառու կազմակերպությունը կրում է 3 տարվա երաշխիքային պարտավորություն:**

Նշված աշխատանքները պետք է իրականացվեն Շենգավիթ վարչական շրջանի շենքերի մուտքերում /հավելված 1/:

Նախատեսված ծավալի աշխատանքների նվազագույն 50% -ը Կապալառու պարտավոր է կատարել պայմանագրով սահմանված ժամկետի կես ժամանակահատվածում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

/ստորագրություն/
Կ.Տ

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
«ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանների բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքներ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	30.09.2020թ
2	Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանների բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքներ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	31.10.2020թ
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

/ստորագրություն/
Կ.Տ

/ստորագրություն/
Կ.Տ

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Ն դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
		Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանների բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքներ	50	90	90	90	100	100	100	100 %
		Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանների բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքներ	50	100	100	100	100	100	100	100 %

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:
** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

/ստորագրություն/
Կ.Տ

/ստորագրություն/
Կ.Տ

Պայմանագրի կողմ

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

Պատվիրատու

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
 ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների						Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ չարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

 ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

 ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____-ին կնքված N _____ գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն